ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ե՞րբ է կառավարել Թուկուլթի-Նինուրտա I-ը:**

1) Ք.ա. 1233-1197թթ.
2) Ք.ա. 1114-1076թթ.
3) Ք.ա. 1232-1179թթ.
4) Ք.ա. 1263-1234թթ.

2 **Ե՞րբ է Ֆրանսիան հռչակվել կայսրություն:**

1) 1801թ.
2) 1804թ.
3) 1805թ.
4) 1800թ.

3 **Ո՞ր թվականին է Կամբիզը գրավել Ստորին Եգիպտոսը:**

1) Ք.ա. 552թ.
2) Ք.ա. 525թ.
3) Ք.ա. 252թ.
4) Ք.ա. 332թ.

4 **Ե՞րբ Ավստրիական կայսրությունը վերածվեց Ավստրո-Հունգարական կայսրության:**

1) 1867թ.
2) 1870թ.
3) 1871թ.
4) 1865թ.

5 **Ո՞ր թվականին վեսթգոթերը գրավեցին և ավերեցին Հռոմը:**

1) 451թ.
2) 467թ.
3) 476թ.
4) 410թ.

6 **Ո՞ր թվականին ընդունված Սահմանադրությամբ է Ֆրանսիան հռչակվել նախագահական հանրապետություն:**

1) 1799թ.
2) 1848թ.
3) 1875թ.
4) 1814թ.

7 **Մուսոլինիի վարչակազմը տապալվել է՝**

1) 1939թ.
2) 1941թ.
3) 1943թ.
4) 1933թ.

8 **Վաղ թագավորության ավարտին Եգիպտոսում իշխանության եկավ՝**

1) 2-րդ հարստությունը
2) 3-րդ հարստությունը
3) 4-րդ հարստությունը
4) 1-ին հարստությունը

9 **Դաշնակիցների ո՞ր խորհրդաժողովը որոշեց Եվրոպայում բացել երկրորդ ճակատ:**

1) Ղրիմի
2) Մոսկվայի
3) Թեհրանի
4) Պոտսդամի

10 **Ալարիխի մահից հետո ո՞ւր հեռացան վեսթգոթերը:**

1) Գալլիա
2) Դակիա
3) Թրակիա
4) Բրիտանիա

11 **«Անմահների գունդը» բաղկացած էր՝**

1) 5000 մարտիկներից
2) 10000 մարտիկներից
3) 15000 մարտիկներից
4) 1000 մարտիկներից

12 **ԱՄՆ-ում 1950-1960-ական թթ. սևամորթ մահմեդականների առաջնորդն էր՝**

1) Մ.Լ.Քինգը
2) Ա.Քինգը
3) Կ.Քինգը
4) Մ.Իքսը

13 **XII դարի հայտնի սքոլաստ փիլիսոփան էր՝**

1) Ռոջեր Բեկոնը
2) Թովմա Աքվինացին
3) Բոկաչչոն
4) Պետրոս Աբելյարը

14 **Ո՞վ էր նորաստեղծ /1949թ/ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլերը:**

1) Վ.Բրանդտը
2) Գ.Շրոդերը
3) Կ.Ադենհաուերը
4) Հ.Քոլը

15 **Մասնավոր հողատիրույթը Հին Ռուսիայում կոչվում էր՝**

1) Պոլյուդիե
2) Վեչե
3) Վոյեվոդա
4) Վոտչինա

16 **Միջազգային իրավունքի տեսակետից՝ մի պետության կողմից ուժի անօրինական գործադրումը մեկ այլ պետության տարածքային ամբողջականության կամ անկախության դեմ՝ կոչվում է.**

1) Հեգեմոնիա
2) Դոկտրինա
3) Դիրիժիզմ
4) Ագրեսիա

17 **Պետական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Հուլիոս Կեսար
բ) Կյուրոս Մեծ
գ) Ալեքսանդր Մակեդոնացի
դ) Սարգոն II

1) ա, դ, գ, բ
2) գ, դ, բ, ա
3) դ, բ, գ, ա
4) բ, ա, դ, գ

18 **Պայմանագրերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Վեստֆալյան
բ) Վերսալի
գ) Բրեստ-Լիտովսկի
դ) Բուխարեստի

1) ա, գ, դ, բ
2) ա, գ, բ, ա
3) ա, գ, դ, բ
4) ա, դ, գ, բ

19 **Արքաներին դասավորել ըստ գահակալման հաջորդականության:**

ա) Կարլոս Մեծ
բ) Հուստինիանոս 1-ին
գ) Ստեֆան Դուշան
դ) Նիկոլայ 1-ին

1) բ, ա, գ, դ
2) բ, ա, դ, գ
3) ա, բ, դ, գ
4) ա, բ, գ, դ

20 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Օսմանյան թուրքերի կողմից Աղրիանապոլսի գրավումը
բ) Ղզլբաշների կողմից Թավրիզի գրավումը
գ) Համամոնղոլական առաջին համագումարի հրավիրումը
դ) Օսմանյան թուրքերի կողմից Բրուսա բերդաքաղաքի գրավումը

1) գ, դ, ա, բ
2) գ, ա, դ, բ
3) գ, բ, դ, ա
4) գ, դ, բ, ա

21 Ե՞րբ է Շ. Դը Գոլը հրաժարական տվել:

1) 1969թ.
2) 1967թ.
3) 1970թ.
4) 1968թ.

22 Ե՞րբ է սկսվել ֆրանս-պրուսական պատերազմը:

1) 1862թ.
2) 1870թ.
3) 1873թ.
4) 1866թ.

23 Ո՞ր թվականին է ԱՄՆ-ում ստեղծվել ջազային երաժշտությունը:

1) 1918թ.
2) 1900թ.
3) 1907թ.
4) 1904թ.

24 Ո՞ր թվականներին է գոյություն ունեցել Լատինական կայսրությունը:

1) 1204-1261թթ.
2) 1402-1461թթ.
3) 976-1025թթ.
4) 1207-1261թթ.

25 Ե՞րբ է փլուզվել Բեռլինի պատը:

1) 1989թ. նոյեմբերի 9-ին
2) 1990թ. նոյեմբերի 11-ին
3) 1990թ. նոյեմբերի 19-ին
4) 1989թ. նոյեմբերի 8-ին

26 «Բոլոր իրերի կեցության սկզբունքը թիվն է» տեսության ջատագովն էր՝

1) Անաքսիմենեսը
2) Պյութագորասը
3) Պլատոնը
4) Թալես Միլեթցին

27 **Հռոմի պապերից ո՞վ է մեծ գործունեություն ծավալել տիեզերական եկեղեցում միապետական կառավարման համակարգ ստեղծելու ուղղությամբ:**

1) Լևոն 3-րդը
2) Գրիգորիոս 7-րդը
3) Բոնիֆացիոս 8-րդը
4) Լևոն 1-ինը

28 **Ո՞ւմ կողմից են գրվել Հունաստանում պատմական բնույթի առաջին գործերը:**

1) Հռոմեացի պատմագիրների
2) Տարեգիրների
3) Իդեալիստների
4) Լոգոգրափոսների

29 **1940թ. դեկտեմբերին Հիտլերի կողմից հաստատվել է՝**

1) «Բարբարոսա պլանը»
2) «Ջախջախման պլանը»
3) «Նվաճողական պլանը»
4) «Կայծակնային պլանը»

30 **1991թ. դեկտեմբերի 21-ին որտե՞ղ կայացած հանդիպման ժամանակ ԽՍՀՄ 11 նախկին հանրապետություններ հայտարարեցին ԽՍՀՄ-ի գոյության վերջնական դադարեցման և ԱՊՀ կոորդինացիոն կառույց ստեղծելու մասին՝**

1) Ալմա Աթայում
2) Մոսկվայում
3) Կիևում
4) Մինսկում

31 **Ո՞րն էր խաչակրաց առաջին արշավանքի հիմնական հետևանքը.**

1) Մերձավոր Արևելքում առաջացան խաչակրաց պետություններ
2) Ստեղծվեց Լատինական կայսրությունը
3) Գրավեցին Կիպրոսը
4) Խաչակիրները գրավեցին Կոստանդնուպոլիսը

32 **Փետրվարյան հեղափոխության արդյունքում Ռուսաստանում՝**

1) Իշխանության գլուխ անցան հետադիմական քաղաքական ուժերը
2) Իշխանության գլուխ անցան ժողովրդավարական քաղաքական ուժերը
3) Հաստատվեցին բացարձակ միապետական կարգեր
4) Տապալվեց Ժամանակավոր կառավարությունը, և իշխանությունն անցավ բոլշևիկյան կուսակցությանը

33 **Պետությունները դասավորել առաջացման ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Աքեմենյան Պարսկաստան
բ) Ասորեստանի աշխարհակալ տերություն
գ) Հին Բաբելոնի թագավորություն
դ) Ալեքսանդր Մակեդոնացու տերություն

1) գ, բ, ա, դ
2) բ, դ, ա, գ
3) ա, դ, գ, բ
4) ա, գ, բ, դ

34 **Իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա) Ջոն Քենեդու սպանությունը ԱՄՆ-ի Դալլաս քաղաքում
բ) Կարիբյան ճգնաժամի սկիզբը Կուբայում
գ) Ուոթերգեթյան գործի բացահայտումը
դ) Մեծ Բրիտանիայում Էլիզաբեթ 2-րդի գահ բարձրանալը

1) դ, ա, բ, գ
2) դ, գ, ա, բ
3) դ, բ, ա, գ
4) դ, բ, գ, ա

35 **Ո՞վ է ստորև բերված արտահայտության հեղինակը.**
«Ձեր ոչխարները խժռում են մարդկանց»

1) Պետրոս Աբելյար
2) Թոմաս Մոր
3) Ջոն Լոկ
4) Թովմա Աքվինացի

36 **Ու՞մ են պատկանում հետևյալ խոսքերը.**

«Մեր քաղաքականությունը միտված է ապահովելու, որ կայուն եկամուտ ունեցող յուրաքանչյուր ոք դառնա սեփականատեր»:

1) Մ.Թեթչեր
2) Ու.Չերչիլ
3) Վ. Վիլսոն
4) Էլիզաբեթ 2-րդ

37 **Պատմական գործչին համապատասխանեցնել պաշտոնի հետ**

1) Սուլլա	ա) Երկրորդ եռապետության անդամ
2) Պերիկլես	բ) Սպարտայի արքա
3) Լեպիդոս	գ) Աթենքի տիրան
4) Լեոնիդաս	դ) Հռոմի դիկտատոր
	ե) Առաջին ստրատեգոս

1) 1- բ, 2-ա, 3-ե, 4-գ
2) 1-ա, 2-բ, 3-դ, 4-ե
3) 1-ե, 2-գ, 3- բ, 4-դ
4) 1-դ, 2-ե, 3-ա, 4- բ

38 **Կատարել համապատասխանեցում:**

1) Ալեքսանդր 1-ին	ա) 1855-1881թթ.
2) Նիկոլայ 1-ին	բ) 1825-1855թթ.
3) Եկատերինա 2-րդ	գ) 1762-1796թթ.
4) Ալեքսանդր 2-րդ	դ) 1801-1825թթ.
5) Պետրոս 1-ին	ե) 1881-1894թթ.
	զ) 1682-1725թթ.

1) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա, 5-զ
2) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ե, 5-զ
3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-ե, 5-զ
4) 1-դ, 2-ա, 3-գ, 4-դ, 5-զ

39 **Ք.ա. 20-րդ դարի սկզբներին Աշուրում հաստատվեց՝**

1) Խեթական հարստություն
2) Շումերական հարստություն
3) Ամորեական հարստություն
4) Աքքադական հարստություն

40 **ԱՄՆ-ում 1950-ական թթ. սկսված արշավը կոչվում էր՝**

1) Իմպերիալիստական
2) Հակակոմունիստական
3) Հակաիմպերիալիստական
4) Կոմունիստական

41 **Ի՞նչ հետևանք ունեցավ Պուատիեյի ճակատամարտը:**

1) Արաբները նվաճեցին Գալլիան և իսլամը տարածեցին Արևմտյան Եվրոպայում
2) Մայորդոմ Կարլոս Մարտելն ազատագրեց Իսպանիան՝ այն միացնելով Ֆրանկական թագավորությանը
3) Արաբներին հաջողվեց ամրապնդվել Հարավային Գալլիայում
4) Կանգնեցվեցին արաբների արշավանքները Արևմտյան Եվրոպա

42 **Առաջին աշխարհամարտի պատճառով սրված քաղաքակրթական ճգնաժամն ամենից շատ ողբերգական ընթացք ունեցավ Ռուսաստանում, որի գլխավոր պատճառն էր՝**

1) Հասարակության արդիականացման ցածր մակարդակը
2) Պետական պարտքի քառապատկումը
3) Երկաթուղիների կանոնավոր երթևեկության խափանումը
4) Երկրի ֆինանսական համակարգի կազմալուծումը

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Անկարայի ճակատամարտը Լենկ Թեմուրի և թուրքերի զորքերի միջև

բ) Մանազկերտի ճակատամարտը բյուզանդական և սելջուկյան բանակների միջև

գ) Քրիստոնեության ընդունումը Կիևյան Ռուսիայում

դ) Անգլիական խորհրդարանի հրավիրումը Սիմոն դը Մոնֆորի կողմից

1) բ, ա, դ, գ
2) գ, ա, դ, բ
3) ա, դ, բ, գ
4) գ, բ, դ, ա

44 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Զաղար քաղաքի գրավումը խաչակիրների կողմից

բ) Հուլիոս Կեսարի սպանությունը Սենատի դահլիճում

գ) Օմայանների կողմից խալիֆայության կառավարման սկիզբը

դ) Աբասյանների կողմից խալիֆայության կառավարման վերջը

1) բ, գ, ա, դ
2) բ, դ, գ, ա
3) բ, գ, դ, ա
4) բ, դ, ա,գ

45 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հերթականությամբ:**

ա) Իտալական բանակի ներխուժումը Եթովպիա և նրա մայրաքաղաքի գրավումը

բ) Իտալիայի դուրս գալը Ազգերի լիգայից

գ) Եթովպիայի միացումը Իտալիային

դ) Խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագրի կնքումը Մոսկվայում

ե) Գերմանական զորքերի մուտքը Ավստրիա

զ) Ճապոնիայի դուրս գալը Ազգերի լիգայից

1) զ, ա, բ, գ, ե, դ
2) ա, զ, գ, դ, բ, ե
3) ա, զ, դ, գ, ե, բ
4) զ, ա, գ, բ, ե, դ

46 **Կատարել համապատասխանեցում:**

1) Զևս	ա) Ծովերի աստված
2) Հերա	բ) Արևի և արվեստների աստված
3) Պոսեյդոն	գ) Սիրո և մայրության աստվածուհի
4) Օսիրիս	դ) Նախաստեղծ-արարիչ
5) Ատում	ե) Մեռնող և հարություն առնող աստվածություն
6) Ապոլոն	զ) Երկնքի և ամպրոպի աստված
7) Իսիդա	է) Մայրության աստվածուհի

1) 1-զ, 2-է, 3-ա, 4-ե, 5-դ, 6-բ, 7-գ
2) 1-զ, 2-է, 3-ա, 4-դ, 5-բ, 6-գ, 7-ե
3) 1-զ, 2-է, 3-ա, 4-դ, 5-գ, 6-բ, 7-ե
4) 1-զ, 2-դ, 3-է, 4-ա, 5-բ, 6-գ, 7-ե

47 **Կատարել համապատասխանեցում:**

1) Սերվանտես	ա) «Անառակ որդու վերադարձը»
2) Մաքիավելի	բ) «Վեներայի ծնունդը»
3) Ուիլյամ Շեքսպիր	գ) «Ֆլորենցիայի պատմությունը»
4) Ռեմբրանդտ	դ) «Դոն Քիշոտ»
5) Սանդրո Բոտիչելլի	ե) «Օթելլո»
	զ) «Ուտոպիա»

1) 1-դ, 2-ե, 3-գ, 4-զ, 5-բ
2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ, 5-ե
3) 1-դ, 2-գ, 3-ե, 4-ա, 5-բ
4) 1-դ, 2-գ, 3-ե, 4-ա, 5-զ

48 **Կատարել համապատասխանեցում.**

1) Ֆիլիպ 2-րդ Օգոստոս	ա) Երուսաղեմի թագավոր
2) Ռիչարդ 1–ին Առյուծասիրտ	բ) Ֆրանսիայի թագավոր
3) Ֆրիդրիխ 1–ին Բարբարոսա	գ) Անգլիայի դուքս
4) Հենրիխ 1-ին	դ) Անգլիայի թագավոր
5) Գոտֆրիդ Բուլյոնացի	ե) Գերմանիայի կայսր
	զ) Սաքսոնիայի դուքս

1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ, 5-զ
2) 1- բ, 2-դ, 3-ե, 4-զ, 5-ա
3) 1-գ, 2-ա, 3-ե, 4-դ, 5-զ
4) 1-ա, 2-զ, 3-բ, 4-գ, 5-ե

49 **Կատարել համապատասխանեցում:**

1) Ֆրանսիայի առաջին Սահմանադրության հաստատումը	ա) 1799թ.
2) «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» հաստատումը	բ) 1798թ.
3) Կոնսուլության հաստատումը Ֆրանսիայում	գ) 1791թ.
4) Կայսրության հաստատումը Ֆրանսիայում	դ) 1851թ.
5) Լուի Նապոլեոնի կողմից իրականացված պետական հեղաշրջումը	ե) 1789թ.
	զ) 1804թ.

1) 1-գ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-դ
2) 1-ե, 2-բ, 3-գ, 4-դ, 5-ա
3) 1-գ, 2-ե, 3-բ, 4-զ, 5-ա
4) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-դ

50 **Կատարել համապատասխանեցում:**

1) ԱՄՆ-ի կողմից ԽՍՀՄ-ին տնտեսական օգնություն ցուցաբերելու մասին հայտարարումը
2) Խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագրի ստորագրումը
3) Խորհրդա-ֆիննական պատերազմի սկիզբը
4) «Հակակոմինտերնյան պակտ»-ի ստորագրումը Գերմանիայի և Ճապոնիայի միջև

ա) 1936թ. նոյեմբերի 25
բ) 1941թ. հունիսի 23
գ) 1940թ. մայիսի 8
դ) 1939թ. օգոստոսի 23
ե) 1939թ. նոյեմբերի 30

1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-ա
2) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
3) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա
4) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե

Բ մակարդակ

51 **Պնդումներից ո՞րն է ճիշտ:**

1) Ուշ թագավորության շրջանում փարավոնները մեծ դժվարությամբ էին դիմագրավում դեպի Եգիպտոս արշավող լուվիական ցեղերի և «ծովի ժողովուրդների» արշավանքներին:
2) Նոր թագավորության շրջանում փարավոնները մեծ դժվարությամբ էին դիմագրավում դեպի Եգիպտոս արշավող լիբիական ցեղերի և «ծովի ժողովուրդների» արշավանքներին:
3) Նոր թագավորության շրջանում փարավոնները մեծ դժվարությամբ էին դիմագրավում դեպի Եգիպտոս արշավող լուվիական ցեղերի և «ծովի ժողովուրդների» արշավանքներին:
4) Ուշ թագավորության շրջանում փարավոնները մեծ դժվարությամբ էին դիմագրավում դեպի Եգիպտոս արշավող լիբիական ցեղերի և «ծովի ժողովուրդների» արշավանքներին:

52 **Ընտրել երկու ճիշտ պատասխան:**

ա) XVl դարի սկզբին Հարավային Գերմանիայում ինդուլգենցիաների վաճառքը հանձնարարվել էր Դոմինիկյան միաբանության վանականներին:
բ) 1744թ., երբ սպանվեց Կարլոս Խիզախը, Նիդերլանդները ժառանգություն մնաց նրա դստերը՝ Մարիային:
գ) Հուգենոտների առաջնորդ Հենրիխ Բուրբոնը 1594թ. ընդունեց կաթոլիկություն և դարձավ Ֆրանսիայի թագավոր:
դ) Ֆրանսիայում Հուգենոտյան պատերազմները տեղի են ունեցել 1564-1592թթ.:
ե) Երեսնամյա պատերազմն ավարտվեց 1648թ. Բուրբոնների պարտությամբ:
զ) 1579թ. կնքված Ուտրեխտի միությունը հիմք դրեց նոր պետության՝ Միացյալ Գավառների Հանրապետության (Հոլանդիա):

1) գ, զ
2) ա, զ
3) բ, ե
4) ա, գ

53 **Առանձնացնել այն երկրները, որոնք չճանաչված կամ մասնակիորեն ճանաչված են և ունեն փաստացի վերահսկողություն իրենց սեփական տարածքի նկատմամբ:**

ա) Արևմտյան Սահարա
բ) Աբխազիա
գ) Պաղեստինի ինքնավարություն
դ) ԼՂՀ
ե) Հարավային Օսիա
զ) Մերձդնեստրյան Հանրապետություն

1) գ, ա, ե, զ
2) բ, դ, ե, զ
3) բ, ա, դ, ե
4) բ, գ, ա, զ

54 **Ո՞րն է «բազիլիկ» բառի նշանակությունը:**

1) Հասարակական-առևտրական կենտրոն
2) Եռամաս երկայնական ընդարձակ սրահ
3) Հասարակական բաղնիք
4) Միջնաբերդ-սրբավայր

55 **Գտնել հասկացությունների համապատասխան բացատրությունները:**

1) «նոր ազգայնականություն»
2) Ռիսոջերմենտո
3) Ազգային կոնվենտ
4) Չարտիզմ
5) Արդյունաբերական հեղաշրջում

ա) արդյունաբերական քաղաքակրթության երկրորդ փուլը, երբ արտադրությունը համատարած մեքենայացվում է
բ) արմատական զանգվածային շարժում Անգլիայում հանուն տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի և հասարակության ազատականացման
գ) ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտի բարեփոխումների նախագիծը
դ) Իտալիայի ազգային միավորմանն ուղղված հզոր հեղափոխական շարժում
ե) 1792թ. ընտրված Սահմանադիր ժողով Ֆրանսիայում
զ) ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի բարեփոխումների ծրագիրը

1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա
2) 1-զ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա
3) 1-զ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-բ
4) 1-գ, 2-ե, 3-բ, 4-ա, 5-դ

56 **Ո՞ր հասկացությունն է վերաբերում հետևյալ շարադրանքին.**

20-րդ դարի ավանգարդիստական ուղղության խոշոր հոսանք, որի ոճի հետևորդները առարկաներին տալիս են իրականության պատրանք, միավորում իրականը և ոչ իրականը:

1) Սյուրռեալիզմ
2) Ավանգարդիզմ
3) Դիրիժիզմ
4) Մոդեռնիզմ

57 **Ո՞րն է 1380թ.Կուլիկովոյի ճակատամարտում ռուսների տարած հաղթանակի հիմնական հետևանքը:**

1) Բարձրացվեց Մոսկվայի իշխանության հեղինակությունը և արագացրեց նրա շուրջ ռուսական հողերի միավորումը:
2) Ռազմաքաղաքական դաշինք կնքվեց Մոսկվայի և Լիտվական Մեծ իշխանության միջև:
3) Մոսկովյան իշխանությանը միացվեց Կազանը, Աստրախանը և Արևմտյան Սիբիրը:
4) Կործանվեց մոնղոլների Ոսկե հորդա պետությունը:

58 **Գտնել Հայկական /Մակեդոնական/ դինաստիայի կառավարման շրջանում Բյուզանդական կայսրության վերելքը պայմանավորող պատճառները:**

ա) Ռազմավարչական բարեփոխումները
բ) Պատկերամարտական շարժումը
գ) Գերատեսչությունների քանակի կրճատումը
դ) Նորմաններից Հարավային Իտալիայում տիրույթների գրավումը
ե) Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը

1) ա, գ, ե
2) ա, դ, ե
3) բ, գ, դ
4) ա, բ, ե

59 **Նշվածներից առանձնացնել երեքը, որոնք պատճառ դարձան 5-7-րդ դարերի մշակույթի անկմանը:**

ա) Ավատատիրական հարաբերությունների անկումը
բ) Արևմտահռոմեական կայսրության անկումը
գ) Բարբարոսական արշավանքները
դ) Սելջուկ-թուրքերի ավերիչ արշավանքները
ե) Անընդմեջ պատերազմները
զ) Ժողովուրդների մեծ գաղթը
է) Գյուղացիական ապստամբությունները

1) բ, գ, ե
2) բ, ե, զ
3) բ, գ, զ
4) ա, բ, գ

60 **Պատմական գործիչներին դասավորել գործունեության հաջորդականությամբ:**

ա) Մարկոս Ավրելիոս
բ) Դիոկղետիանոս
գ) Տրայանոս
դ) Ալարիխ
ե) Կոստանդիանոս

1) գ, ա, դ, ե, բ
2) գ, ա, բ, ե, դ
3) գ, ա, բ, դ, ե
4) գ, բ, ա, ե, դ

61 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Կարլոս Մեծի կողմից դեպի Հյուսիսարևելյան Իսպանիա արշավանքը
բ) Հռոմեական կայսրության՝ 12 դիոցեզների բաժանումը
գ) Վեսպասիանոսի կայսր հռչակվելը
դ) Բեոտեայի Քերոնիա բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտը
ե) Հուստինիանոսի կայսեր հռչակվելը
զ) Չուդ լճի ճակատամարտը
է) Ոսկե Հորդայի տիրապետության վերջնական տապալումը
ը) Կորնթոսի համահունական վեհաժողովը
թ) Ֆրանկների կողմից քրիստոնեության ընդունումը
ժ) Պիպին Կարճահասակի հռչակումը թագավոր

1) դ, ը, գ, բ, թ, ե, ժ, ա, է, զ
2) դ, ը, գ, բ, թ, ե, ժ, զ, ա, է
3) դ, ը, գ, բ, թ, ժ, ե, ա, է, զ
4) դ, ը, գ, բ, թ, ե, ժ, ա, զ, է

62 **Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Լոզանի հաշտության պայմանագրի կնքումը
բ) Խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագրի կնքումը Մոսկվայում
գ) Մեծ ճգնաժամի սկիզբը
դ) Փարիզի խորհրդաժողովի բացումը
ե) Ադոլֆ Հիտլերի նշանակվելը Գերմանիայի ռայխսկանցլերի պաշտոնում
զ) ճապոնացիների հարձակումը Պիրլ Հարբոր ռազմածովային հենակայանի վրա
է) Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը

1) դ, ա, գ, ե, բ, զ, է
2) գ, դ, ա, բ, ե, զ, է
3) ա, գ, բ, ե, դ, է, զ
4) ա, դ, բ, ե, գ, է, զ

63 **Ո՞վ է ստորև բերված խոսքերի հեղինակը.**

«Դուրս գալով անախորժություններով լի այս ժամանակներից՝ մեր 5-րդ նպատակը կլինի նոր աշխարհակարգը, որը կարող է ի հայտ գալ իբրև նոր դարաշրջան՝ ահաբեկչության սպառնալիքից ավելի ապահովագրված....»

1) Ջորջ Բուշ Կրտսեր
2) Բիլ Քլինթոն
3) Բարակ Օբամա
4) Ջորջ Բուշ Ավագ

64 **«Եթե Ազգերի համագործակցության անգլիախոս բնակչությանը հավելենք և հաշվի առնենք, թե ինչ կնշանակի նման համագործակցությունը ծովում, օդում, գիտության և արդյունաբերության բնագավառում, ապա գոյություն չի ունենա ուժերի և ոչ մի երերուն և վտանգավոր հարաբերակցություն»:**
Ո՞ր պետության անվանումն է բացակայում նշված խոսքերում.

1) Մեծ Բրիտանիա
2) ԱՄՆ
3) Ֆրանսիա
4) Գերմանիա

65 **Կատարել համապատասխանեցում.**

	Իրադարձությունը		Վայրը		Տարեթիվը
1.	Քիմիական զենքի առաջին կիրառումը	1.	Անկարա	1.	1916
2.	Զինադադարի ստորագրումն Անտանտի և Գերմանիայի միջև	2.	Կոմպիենյան անտառ	2.	1915
3.	Տանկերի առաջին կիրառումը պատերազմում	3.	Իպր	3.	1923
4.	Թուրքիայի հռչակվելը հանրապետություն	4.	Սոմ	4.	1918

1)

1	3	2
2	2	4
3	4	1
4	1	3

2)

1	3	2
2	1	1
3	2	4
4	4	3

3)

1	2	3
2	4	4
3	1	2
4	3	1

4)

1	3	2
2	2	4
3	1	3
4	4	1

66 **Կատարել համապատասխանեցում.**

1) Էքբատան
2) Ալեքսանդրիա
3) Կուսսար
4) Երուսաղեմ
5) Սիրակուզա

ա. Սիցիլիա
բ. Պարսկաստան
գ. Մարաստան
դ. Խեթական պետություն
ե. Հուդայի թագավորություն
զ. Եգիպտոս

1) 1-գ, 2-զ, 3-դ, 4-ե, 5-ա
2) 1-ա, 2-ե, 3-բ, 4-զ, 5-դ
3) 1-գ, 2-դ, 3-զ, 4-ե, 5-ա
4) 1-բ, 2-գ, 3-զ, 4-ա, 5-ե

67 **Նշվածներից ընտրել 3-ը, որոնք վերաբերում են խաչակրաց չորրորդ արշավանքին:**

ա) Գրավվեց Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը
բ) Խաչակիրները վերականգնելու էին Իսահակ 2-րդ Անգելոսի իշխանությունը
գ) Խաչակիրները կորցրին իրենց վերջին հենակետն Արևելքում՝ Ակրան
դ) Վաճառականներին և ուխտավորներին թույլատրվեց 3 տարի այցելել Երուսաղեմ
ե) Ստեղծվեց Կիպրոսի թագավորությունը
զ) Բյուզանդիայից խլված տարածքների վրա ստեղծվեց Լատինական կայսրությունը

1) ա, գ, զ
2) ա, դ, ե
3) ա, դ, զ
4) ա, բ, զ

68 **Ո՞ր պնդումներն են սխալ:**

ա) Ք.ա. VI հազ-ի վերջում Եգիպտոսում բարձր զարգացման է հասել խեցեգործությունը:
բ) Ք.ա. V հազ-ի սկզբում Եգիպտոսում հանդես են գալիս I մշտական բնակավայրերը:
գ) Ք.ա. V հազ-ի վերջում Եգիպտոսում սկիզբ դրվեց միջազգային առևտրին:
դ) Ք.ա. IV հազ-ի I կեսին մեծ փոփոխություններ արձանագրվեցին հասարակության կյանքում:
ե) Ք.ա. V հազ-ի վերջում Եգիպտոսում բնակիչները զբաղվում էին պարզունակ երկրագործությամբ:

1) ա, բ, ե
2) բ, գ, ե
3) գ, դ, ե
4) ա, գ, ե

69 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Իննոկենտիոս 3-րդ պապի կողմից խաչակրաց արշավանք սկսելը ալբիգոյաների դեմ
բ) «Գոթերի պատմություն» աշխատության վերաշարադրումը Յորդանի կողմից
գ) Վորմսի համաձայնագրի կնքումը
դ) Հունգարների առաջին պարտությունը գերմանացիներից
ե) Գերմանիայում Կարոլինգյան արքայատան դադարումը
զ) Պիպինի հռչակվելը թագավոր
է) Օտտոնի երկրորդ արշավանքը Հռոմ
ը) Կարլոս Մեծի՝ դեպի Իսպանիա արշավելը

1) բ, զ, ը, ե, դ, ա, գ, է
2) բ, զ, ը, ե, դ, է, ա, գ
3) բ, զ, ը, ե, է, ա, գ, դ
4) բ, զ, ը, ե, դ, է, գ, ա

70 **Հասկացությունները համապատասխանեցնել բովանդակությանը:**

1) ապարտեիդ
2) ցեղասպանություն
3) վերակառուցում
4) համաշխարհայնացում

ա) Պետականորեն կազմակերպված ազգի, ընկերային կամ կրոնական խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացում
բ) Հասարակական կյանքի փոփոխություն, վերադասավորություն
գ) Արդի աշխարհի ամբողջական, համակարգված միասնականացման գործընթացը
դ) Ռասսայական խտրականության ծայրահեղ դրսևորումներ ունեցող վարչակարգ Հարավաֆրիկյան Հանրապետությունում 1948-1990թթ.
ե) 1985-1991թթ. ԽՍՀՄ-ում իրականացված վերափոխումների ընդհանրացված անվանումը

1) 1-ե, 2-բ, 3-դ, 4-ա
2) 1-ա, 2-ե, 3-բ, 4-դ
3) 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ
4) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ե

71 **Գտնել ղուրուլթայ բառի համարժեքը:**

1) Ժողով
2) Խորհուրդ
3) Պատերազմ
4) Համագումար

72 **Գտնել տրված հասկացությունների բացատրությունները.**

1) Ռեֆորմացիա
2) Համքարություն
3) Ինվեստիտուրա
4) Մայորդոմ
5) Գիլդիա

ա) 16-րդ դարում սկսված շարժում, որն իր սուր ծայրով ուղղված էր հռոմեակաթոլիկական եկեղեցու դեմ
բ) Սենյորի կողմից ավատը վասալին հանձնելու արարողակարգը
գ) Առևտրականների ստեղծած հատուկ միավորում միջնադարյան քաղաքներում
դ) Սկզբնապես արքայական կալվածքների կառավարիչ Ֆրանկական պետությունում
ե) Թագավորական պալատի պաշտպանությունը կազմակերպող պաշտոնյա
զ) Հատուկ կազմակերպություն, ուր միավորվում էին նույն մասնագիտության արհեստավորները

1) 1-զ, 2-բ, 3-դ, 4-գ, 5-ա
2) 1-գ, 2-ե, 3-բ, 4-զ, 5-ա
3) 1-ե, 2-բ, 3-դ, 4-գ, 5-ա
4) 1-զ, 2-դ, 3-բ, 4-ա, 5-գ

73 **Նշվածներից որո՞նք են Վեստֆալյան հաշտության հետևանքները:**

ա) Շվեդիան դարձավ Բալթյան տարածաշրջանի հզոր պետություն
բ) Ֆրանսիան վերածվեց Եվրոպայի ամենաբարձր քաղաքական հեղինակություն ունեցող երկրի
գ) առաջացավ Բելգիա պետությունը
դ) միջազգային ճանաչում ստացան Շվեյցարական միությունը և Հոլանդիան
ե) Իսպանիան վերածվեց կաթոլիկական հզոր պետության
զ) օրինականացվեց Գերմանիայի քաղաքական և դավանաբանական մասնատվածությունը
է) Չեխիան ստացավ անկախություն

1) ա,բ, դ, զ
2) ա, բ, զ, է
3) ա, բ, դ, է
4) ա, բ, գ, զ

74 **Նշվածներից որո՞նք են վերաբերվում երկրի պետական կառավարման համակարգում Սուլլայի կատարած փոփոխություններին:**

ա) Ծերակույտն իրավունք ուներ հաստատելու օտարերկրյա դեսպանությունները:
բ) Ընդարձակվեցին Ծերակույտի լիազորությունները:
գ) Պետության դրամամիջոցների տնօրինումը շնորհվում էր Ծերակույտին:
դ) Ծերակույտին հանձնվեցին ցենզորների գործառույթները:
ե) Ծերակույտի անդամների թիվը հասցվեց 900-ի:
զ) Ծերակույտն էր տնօրինում պրոսկրիպցիաները:
է) Ծերակույտին հանձնվեցին պրովինցիաների կառավարիչների նկատմամբ հսկողությունը:

1) բ, գ, դ, է
2) բ, գ, դ, զ
3) ա, բ, ե, զ
4) ա, բ, գ, ե

75 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) «Ազատ ձեռներեցության մասին» օրենքի ընդունումը Ռուսական կայսրությունում
բ) Ճորտատիրական համակարգի վերացումը Ռուսական կայսրությունում
գ) ԱՄՆ-ում կառավարություն կազմելու միակուսակցական համակարգի սկզբնավորումը
դ) Արևելյան կամ Ղրիմի պատերազմի ավարտը
ե) Բուլղարիների խոշոր ապստամբությունը Թուրքիայի դեմ
զ) Իրանում կրոնա-քաղաքական ուսմունքի՝ բաբիականության հրապարակ գալը
է) Իրանական բանակի ներխուժումը Անդրկովկաս և Ղարաբաղի գրավումը
ը) Հերաթ քաղաքի համար անգլո-իրանական հակամարտությունը
թ) Թեհրանում զանգվածային ընդվզումների ծագումը իշխանությունների դեմ
ժ) Փարիզում բանվորների /Փարիզի կոմունա/ ապստամբությունը իշխանությունների դեմ

1) ա, ե, է, գ, դ, ժ, զ, բ, ը, թ
2) ա, է, գ, ը, զ, դ, բ, ժ, ե, թ
3) ա, է, գ, ը, զ, դ, բ, ե, ժ, թ
4) ա, ե, է, գ, դ, ժ, բ, զ, ը, թ

76 **Պատմական գործիչներին դասավորել ըստ գործունեության հաջորդականության.**

ա) Թոմաս Ջեֆերսոն
բ) Բորիս Ելցին
գ) Ալեքսանդր Մակեդոնացի
դ) Թեմուչին
ե) Կառլոս Մեծ
զ) Ներոն
է) Եկատերինա 2-րդ
ը) Աբդուլ Համիդ 2-րդ
թ) Շառլ դը Գոլ
ժ) Ալեքսանդր 2-րդ

1) գ, զ, ե, ա, ը, զ, ժ, է, թ, բ
2) գ, զ, ե, դ, է, ա, ժ, ը, թ, բ
3) գ, զ, ե, դ, է, ա, ժ, թ, ը, բ
4) գ, զ, ե, ա, ը, բ, զ, ժ, է, թ

77 **Կատարել համապատասխանեցում.**

	Իրադարձությունը		Վայրը		Տարեթիվը
1.	Ճակատամարտ հռոմեա-գերմանա-գալական և հունական զորքերի միջև	1.	Նիկեա	1.	387
2.	Հռոմեացիների պարտությունը գոթերից	2.	Կատալաունյան դաշտ	2.	325
3.	Քրիստոնեական պարտադիր դոգմանների ընդունում	3.	Գավգամելա	3.	451
4.	Ճակատամարտ մակեդոնական և պարսկական զորքերի միջև	4.	Աղրիանապոլիս	4.	Ք.ա. 331

1)

1	2	3
2	4	1
3	3	1
4	1	3

2)

1	2	3
2	4	1
3	1	2
4	3	4

3)

1	2	3
2	4	4
3	1	2
4	3	1

4)

1	3	2
2	2	4
3	1	3
4	4	1

78 **Կատարել համապատասխանեցում:**

1) Յարոսլավ Իմաստուն
2) Ս.Բոտիչելլի
3) Դ.Ալիգիերի
4) Բոկաչչո
5) Կասիոդոր
6) Գրիգորիոս Տուրացի
7) Թովմա Աքվինացի

ա) «Վեներայի ծնունդը»
բ) «Դեկամերոն»
գ) «Ֆրանկների պատմություն»
դ) «Գոթերի պատմություն»
ե) «Ռուսկայա պրավդա»
զ) «Աստվածային կատակերգություն»
է) «Աստվածաբանության հանրագումար»

1) 1-ե, 2-ա, 3-բ, 4-գ, 5-դ, 6-գ, 7-է
2) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ, 5-դ, 6-գ, 7-է
3) 1-ե, 2-բ, 3-ա, 4-դ, 5-գ, 6-է, 7-գ
4) 1-ե, 2-ա, 3-գ, 4-բ, 5-դ, 6-գ, 7-է

79 **Հասկացությունները համապատասխանեցնել բովանդակությանը :**

1) Ագրեսիա
2) Հեգեմոնիա
3) Դոկտրինա
4) Դիրիժիզմ

ա) Պատերազմում պարտված երկրի տարածքի ժամանակավոր գրավումը հաղթող երկրի զինված ուժերի կողմից
բ) Որևէ պետության, քաղաքական ուժի կամ միության ղեկավար, գերիշխող դերը մյուսների նկատմամբ
գ) Երկրորդ աշխարհամարտից հետո Ֆրանսիայում շրջանառության մեջ դրված հասկացություն, որին բնորոշ էր պետության միջմտությունը տնտեսության կառավարմանը
դ) Քաղաքական կամ տեսական ղեկավար սկզբունք, հայեցակարգ
ե) Միջազգային իրավունքի տեսակետից՝ մի պետության կողմից ուժի անօրինական գործադրումը մեկ այլ պետության տարածքային ամբողջականության կամ անկախության դեմ

1) 1-ե, 2-բ, 3-դ, 4-ա
2) 1-ե, 2-բ, 3-դ, 4-գ
3) 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ
4) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա

80 **Կատարել համապատասխանեցում.**

1) Սալամի
2) Կոսովո
3) Պուատիե
4) Մանազկերտ
5) Սուասոն

ա) Ռոմանոս Դիոգենես
բ) Քլոդվիգ
գ) Ստեֆան Դուշան
դ) Կառլոս Մարտել
ե) Թեմիստոկլես
զ) Հուլիոս Կեսար

1) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ, 5-բ
2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-զ, 5-դ
3) 1-ե, 2-գ, 3-դ, 4-ա, 5-բ
4) 1-ե, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ա